



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ԶԻՒՍՈՆՅԱՆԵՐԻ
«ԿՅԱՆՔԻ ԽՈՍՔ» ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՍԻՄՈՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

(գանգատ թիվ 30817/13)

ՎՃԻՌ

Հոդված 9 • Կրոնական հարցերում պետության չեզոքության եւ անկողմնակալության պարտականության հետ կապված որեւէ խախտում տեղի չի ունեցել՝ հաշվի առնելով կրոնական կազմակերպության եւ դրա հովվի մասին թերթի հոդվածներին առնչվող, զրպարտության եւ վիրավորանքի կապակցությամբ ներկայացված հայցերի համատեքստում ներպետական դատարանների կողմից իրականացվող հավասարակշռման վերաբերյալ որոշումները • դիմումատուների իրավունքներին որեւէ միջամտություն տեղի չի ունեցել • ակնհայտ անհիմն

Հոդված 6, կետ 1 (քաղաքացիական) • Վճռաբեկ դատարանի կողմից դիմումատուների վճռաբեկ բողոքի ընդունման մերժմամբ անհամաչափորեն եւ անհիմն կերպով սահմանափակվել է նրանց՝ դատարանի մատչելիության իրավունքը • դիմումատուների կողմից դատավարական կանոնները չպահպանելն ակնհայտորեն պայմանավորված է եղել տպագրական սխալով կամ նմանատիպ վրիպակով, որն ուղղելու հնարավորություն նրանց չի տրվել • դատավարական կանոնների առանձնակի խստությամբ կիրառում հանգեցնելով «ավելորդ ձեւականության»:

Կազմվել է Զարտուղարության կողմից: Դատարանի համար պարտադիր չէ:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

2 ապրիլի 2026թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների «Կյանքի խոսք» եկեղեցին եւ Սիմոնյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Հինգերորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Կատերինա Շիմայչկովա [Kateřina Šimáčková]՝ *Նախագահ,*

Մարիա Էլոսեգի [María Elósegui],

Գեորգիոս Ա. Սերգիդես [Georgios A. Serghides],

Ջիլբերտո Ֆելիչի [Gilberto Felici],

Միկոլա Գնատովսկի [Mykola Gnatovskyy],

Վահե Գրիգորյան [Vahe Grigoryan],

Սեբաստիան Բիանշերի [Sébastien Biancheri]՝ *դատավորներ,*

եւ Վիկտոր Սոլովեյչիկ [Victor Soloveytchik]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

հաշվի առնելով՝

Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների «Կյանքի խոսք» եկեղեցի կրոնական կազմակերպության (դիմումատու կազմակերպություն) եւ Հայաստանի քաղաքացի պրն Արթուր Սիմոնյանի (դիմումատու) կողմից «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2013 թվականի մայիսի 8-ին Դատարան ներկայացված գանգատը (թիվ 30817/13),

դատարանի մատչելիության բացակայության եւ դիմումատուների՝ կրոնի ազատության իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ բողոքների մասին Հայաստանի կառավարությանը (Կառավարություն) ծանուցելու եւ գանգատը մնացած մասով անընդունելի հայտարարելու մասին որոշումը,

կողմերի դիտարկումները,

2026 թվականի մարտի 10-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գործը վերաբերում է Վճռաբեկ դատարանի կողմից դիմումատուների վճռաբեկ բողոքի ընդունման մերժմանը, ինչպես նաև պետության չեզոքության պարտականության ենթադրյալ խախտմանը՝ հաշվի առնելով Վարչական շրջանների դատարանի՝ դիմումատուների եւ թերթի միջեւ վեճի վերաբերյալ որոշում ընդունելիս կիրառվող պատճառաբանությունը՝ կապված այն հոդվածների հետ, որոնցում դիմումատու կազմակերպությունն անվանվել է «աղանդ», իսկ դրա հետեւորդները՝ «աղանդավորներ» (համապատասխանաբար՝ աղանդ եւ աղանդավոր): Այն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 9-րդ հոդվածի իմաստով խնդրահարույց է:

ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատու կազմակերպությունը՝ ավետարանական հավատքի քրիստոնյաների «Կյանքի խոսք» եկեղեցի կազմակերպությունը, կրոնական կազմակերպություն է, որը Հայաստանում գրանցված է 1993 թվականից: Երկրորդ դիմումատուն՝ պրն Արթուր Սիմոնյանը, դիմումատու կազմակերպության ավագ հովիվն ու առաջնորդն է: Նա ազգությամբ հայ է, ծնվել է 1966 թվականին եւ բնակվում է Վերին Պտղնիում: Դիմումատուներին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Ա. Ղազարյանը:

3. Կառավարությանը ներկայացրել է նախկին ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

4. Գործի փաստական հանգամանքները կարելի է ամփոփել հետեւյալ կերպ:

5. 2011 թվականին իշխանությունները քննություն են սկսել Կ.Ա.-ի դեմ՝ պոռնոգրաֆիկ բնույթի նյութեր տարածելու եւ անձնական կյանքի գաղտնիության կանոնները խախտելու կասկածանքով: Ըստ մեղադրանքների՝ Կ.Ա.-ն համացանցում հրապարակել էր անձնական բնույթի նյութեր, մասնավորապես՝ լուսանկարներ հայտնի դերասանուհի Ա.Ս.-ի հետ սեռական հարաբերություն ունենալու վերաբերյալ: Դեպքը հանրային աղմուկ է բարձրացրել եւ հանրային

քննարկումներ է առաջացրել մի կողմից՝ անձի անձնական կյանքը հարգելու, մյուս կողմից՝ պոռնոգրաֆիկ բնույթի նյութեր տարածելու համար պատասխանատվություն կրելու վերաբերյալ: Դեպքերը հանգեցրել են առցանց լրատվամիջոցներում բազմաթիվ հրապարակումների, որոնցից մի քանիսը ներառում էին ենթադրություններ առ այն, որ Ա.Ս.-ն դիմումատուների կողմից քարոզվող հավատքի հետեւորդ էր:

6. 2011 թվականի հոկտեմբերի 19-ին «Իրավունք (Հետաքննություն)» («Իրավունք (Հետաքննություն)») շաբաթաթերթը հրապարակել է «Պոռնոգրաֆիկ լուսանկարների հետ կապված աղանդի պատմությունը «վերածվել» է մանկապղծության հետ կապված մեղադրանքների» վերտառությամբ հոդված: Հոդվածն սկսվում էր Ա.Ս.-ի հետ կապված սկանդալի հիշատակմամբ՝ հավելելով, որ պատմությունը չէր արժանանա թերթի ուշադրությանը, եթե առկա չլիներ երկու գործոն: Առաջինը՝ ենթադրվում էր, որ Ա.Ս.-ն Հայաստանի ամենամեծ «Կյանքի խոսք» աղանդի անդամ էր, որի անդամների ցանկում էին շուրջ-բիզնեսի շատ ներկայացուցիչներ: Երկրորդ՝ Ա.Ս.-ի դեմ մեղադրանքներ էին առաջադրվել առ այն, որ նա անպարկեշտ գործողություններ էր կատարել իր սեփական երեխայի հետ: Հոդվածում պատմությունը նկարագրվում էր որպես «աղանդի եւ արյունապղծության ու մանկապղծության մեղադրանքների» պայթյունավտանգ համադրություն, իսկ Ա.Ս.-ին անվանում էին աղանդավոր: Այնտեղ նաեւ նշվում էր, որ «Կյանքի խոսք»-ը «աղանդավորական միավորում» էր եւ Հայաստանի հասարակության շրջանում հայտնի էր որպես որոշ շրջանակների, այդ թվում՝ հեռուստաընկերությունների եւ պետական պաշտոնատար անձանց վրա ազդեցություն ունեցող միավորում: Հոդվածում առկա էին թվային եղանակով փոփոխված նկարներ: Առաջին նկարում երեւում էր, որ երկրորդ դիմումատուն կրում էր քահանայի հանդերձանք, կրծքավանդակին գրված էր «Կյանքի խոսք», թեքված դեպի կիսամերկ Ա.Ս.-ն, որը կրում էր միանձնուհու գլխաշոր եւ ձեռքերն իրար էին սեղմած՝ ասես աղոթելիս: Երկրորդ նկարում Ա.Ս.-ն միանձնուհու հագուստով էր եւ պատկերված էր դիմացից՝ ձեռքին «Կյանքի խոսք» գրությամբ ցուցանակ:

7. Հոդվածը եւ թվային եղանակով փոփոխված միեւնույն նկարները որոշ աննշան փոփոխություններով վերատպագրվել են «*Argumenti Nedeli v Armenii*» (Հայաստանում շաբաթվա նորություններ) ռուսերեն շաբաթաթերթի հոկտեմբերի 25-31-ի թողարկման մեջ՝ «Աղանդավորության եւ պոռնոգրաֆիայի

պատմություն» վերտառությամբ: Հոդվածում նշվում էր, որ միայն կարելի էր պատկերացնել, թե ինչպիսի արժեքներ են քարոզվում «տվյալ աղանդի» կողմից, եթե Ա.Ս.-ն շարունակի մնալ «Կյանքի խոսք» միավորման անդամ:

8. Չհստակեցված ամսաթվին Ա.Ս.-ն հեռուստատեսային թոք շոուի ժամանակ հայտնել էր, որ երբեւէ դիմումատու կազմակերպության կամ որեւէ այլ կրոնական կազմակերպության կամ եկեղեցու անդամ չի եղել:

9. «Իրավունք (Հետաքննություն)» շաբաթաթերթը եւ դրա գլխավոր խմբագիրը դիմումատուների վերաբերյալ հետազայում մի քանի այլ նկարներ, հոդվածներ եւ նյութեր են հրապարակել: Նշված հրապարակումներից որոշներում ընթերցողներին կոչ էր արվում միանալ դիմումատուների դեմ արշավին, եւ ունեին հետեւյալ վերնագրերը՝ «Միացե՛ք պատերազմին», «Պատերազմ սրբապղծության դեմ», «Աղանդներ», «Կյանքի խոսք գաղտնի աղանդի պարագլուխը» եւ այլ վերնագրեր:

10. 2011 թվականի նոյեմբերի 18-ին դիմումատուները զրպարտության եւ վիրավորանքի վերաբերյալ հայց են ներկայացրել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարան՝ «Իրավունք (Հետաքննություն)» եւ «Argumenti Nedeli v Armenii» (Հայաստանում շաբաթվա նորություններ) թերթերը հրատարակող «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի դեմ: Դիմումատուները պահանջում էին, որ պատասխանողը հրապարակավ ներողություն խնդրեր եւ հերքեր Արթուր Սիմոնյանի եւ Ա.Ս.-ի միջեւ ենթադրյալ կապի առկայության մասին արված հայտարարությունները: Նրանք վիճարկում էին, որ հոդվածների նպատակն էր առանց խնդրո առարկա տեղեկությունների հավաստիությունը ստուգելու դիմումատուների եւ հոդվածներում նկարագրված փաստերի միջեւ ստեղծել փոխկապակցվածություն եւ քննադատության շղարշի ներքո դիմումատուներին ներկայացնել որպես չափազանց վտանգավոր երեւույթ: Նրանք պնդում էին, որ հոդվածները երկրորդ դիմումատուի համար վիրավորական եւ հասարակության եւ եկեղեցու անդամների առջեւ նրա պատիվը, արժանապատվությունը եւ համբավն արատավորող ապատեղեկատվություն էին պարունակում: Դրանք նվաստացնում էին դիմումատուներին եւ ուղղված էին ապակողմնորոշելու ընթերցողներին: Դիմումատուները, ի թիվս այլնի, հիմնվում էին Կոնվենցիայի 9-րդ հոդվածի վրա:

11. 2012 թվականի հունվարի 9-ին եւ ապրիլի 13-ին դիմումատուները լրացում են կատարել իրենց սկզբնական պահանջներում, ի թիվս այլնի պնդելով, որ եկեղեցուն «աղանդ» անվանելը նվաստացնող եւ վիրավորական էր: Եկեղեցին «աղանդ» կամ «աղանդավորական միավորում» անվանելն անընդունելի էր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքով այն անվանվում էր «կրոնական կազմակերպություն», ինչպես նաեւ այն, որ հոդվածներում օգտագործվող բառերը հասարակության մեջ համարվում էին վիրավորանքներ եւ նվաստացնող արտահայտություններ: Նրանք փաստարկներ են ներկայացրել այդ բառերի բացասական երանգների վերաբերյալ՝ վիճարկելով, որ դրանք կարող էին իրենց նկատմամբ հրահրել ծաղր, ոտնձգություն, կրոնական ատելություն եւ թշնամանք: Ավելին, նրանք պնդում էին, որ կրոնական կազմակերպությունն աղանդ անվանելը մարդկանց հետ էր պահում այդ կազմակերպության կողմից քարոզվող հավատքի հետեւորդ դառնալուց: Տվյալ բառի օգտագործումը վնաս է հասցրել իրենց արժեքներին եւ բնակչության շրջանում իրենց նկատմամբ անվստահություն է առաջացրել: Դիմումատուները «աղանդ» բառի նշանակության վերաբերյալ հետազոտություն են ներկայացրել Վարչական շրջանների դատարան՝ հղում կատարելով տարբեր աղբյուրների, այդ թվում՝ բառարանի, ազգային եւ միջազգային իրավական փաստաթղթերի, հոդվածների եւ հետազոտական հրապարակումների:

12. 2012 թվականի մարտի 22-ին պատասխանողը նամակ է ուղարկել Հայաստանյայց առաքելական եկեղեցու առաջնորդին այն հարցով, թե արդյոք Առաքելական եկեղեցին որեւէ կապ ուներ դիմումատու կազմակերպության հետ, արդյոք դիմումատու կազմակերպությունն աղանդ էր, եւ եթե այո, ապա ինչ հիմքով:

13. 2012 թվականի մարտի 23-ին Հայաստանյայց առաքելական եկեղեցու առաջնորդը պատասխանել է նամակին՝ հայտնելով, որ իր եկեղեցին որեւէ կապ չունի դիմումատու կազմակերպության հետ, եւ որ վերջինս համարվում էր աղանդ այն պատճառով, որ նրա համոզմունքների համակարգը շեղվել էր Հայաստանյայց առաքելական եկեղեցու իրական հավատքից, կանոններից եւ ավանդական սկզբունքներից:

14. Նույն օրը Վարչական շրջանների դատարանն անցկացրել է գործով իր առաջին դատական նիստը: Մի շարք ակտիվիստներ դրսում կազմակերպել էին

բողոքի ցույց՝ ձեռքերին պահելով պաստառներ՝ հետեւյալ կարգախոսներով. «Ասե՛ք ո՛չ աղանդներին», «Ասե՛ք ո՛չ «Կյանքի խոսք»-ին», «Կյանքի խոսք»-ն աղանդ է», «Դադարեցրե՛ք քարոզչությունը» եւ «Հայաստանյայց առաքելական եկեղեցու անունից»: Բողոքի ցույցին ներկա էր Հայաստանյայց առաքելական եկեղեցու քահանա:

15. 2012 թվականի հունիսի 19-ին դիմումատուների պահանջով կրոնական եւ իրավական հարցերով անկախ փորձագիտական ասոցիացիան տրամադրել է վիճարկվող հրապարակումների, այդ թվում՝ կրոնական կազմակերպության մասին խոսելիս «աղանդ» բառն օգտագործելու վերաբերյալ եզրակացություն: Այն եզրակացրել է, որ դիմումատուների նկատմամբ «աղանդ», «աղանդավոր» եւ «աղանդավորական» բառերի օգտագործումը նվաստացնող, վիրավորական եւ ճնշող է: Այն նաեւ նկատել է, որ լրատվամիջոցների վիճարկվող հրապարակումների նպատակն էր դիմումատու կազմակերպությանը տալ ընդհատակյա գործող եւ հակասոցիալական պատկեր:

16. 2012 թվականի հուլիսի 31-ին Վարչական շրջանների դատարանը մերժել է դիմումատուների պահանջները: Այն վճռել է, որ վիճարկվող հրապարակումները չեն պարունակել նվաստացնող կամ վիրավորական արտահայտություններ, եւ դրանք պաշտպանված էին պատասխանող կազմակերպության արտահայտվելու ազատությամբ, ինչը լրագրողներին թույլ էր տալիս կիրառել չափազանցված եւ սադրիչ լեզու: Այն նաեւ շեշտել է, որ դիմումատուներին չի հաջողվել ապացուցել պատասխանողի նվաստացնելու մտադրությունը: Վարչական շրջանների դատարանը մասնավորապես վճռել է՝

«...որ հոդվածները եւ նկարները հրապարակվել են միայն դերասանուհի Ա.Ս.-ի մասնակցությամբ սկանդալային միջադեպերից հետո, որտեղ նրա անունը կապվում էր դիմումատու կազմակերպության հետ, որը համարվում էր աղանդավորական կազմակերպություն եւ ենթարկվում էր քննադատության: Այն պահից, երբ դիմումատուները մուտք գործեցին բաց քննարկումների տիրույթ, նրանք պետք է քննադատության նկատմամբ որոշակի հանդուրժողականություն ցուցաբերեին, ինչն ընդհանուր առմամբ հետապնդում էր հասարակության մեջ որոշակի կրոնական գաղափարներ սերմանելու կամ հասարակությանը Հայաստանյայց առաքելական եկեղեցու կրոնական հավատքից շեղվելու մտքից հետ պահելու, այլ ոչ թե որեւէ մեկին վիրավորելու կամ նվաստացնելու նպատակ:

...

... Դատարանը նշում է, որ պատասխանող ընկերության կողմից օգտագործվող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ԶԻՒՍՈՆՅԱՆԵՐԻ «ԱՅԱՆՔԻ ԽՈՍՔ»
ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՍԻՄՈՆՅԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

բառերի միջոցով նյութի հեղինակը հստակ նպատակ ուներ լուսաբանելու եւ քննադատելու կրոնական կազմակերպության եւ դրա առաջնորդի գործունեությունը եւ դրանով իսկ առաջացնելու որոշակի արձագանք: Հետեւաբար նյութում օգտագործված արտահայտությունները չեն կարող համարվել վիրավորական եւ նվաստացնող:

...

Տվյալ դեպքում դատարանը գտնում է, որ հեղինակն օգտագործել է «աղանդ» բառը՝ որպես արժեքների վերաբերյալ դատողություն, եւ որ հեղինակն օգտագործել է արտահայտություններ, որոնք կարող էին ապշեցնել հասարակությանը, այդ թվում՝ կրոնական կազմակերպության հետ կապված «աղանդ» բառի օգտագործումը:

Դատարանը նշում է, որ դատաքննության ընթացքում հայցվորների ներկայացուցիչն ընդունում էր, որ հայցվորները որեւէ կապ չունեին Հայաստանյայց առաքելական եկեղեցու հետ: Համաձայն ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի՝ «աղանդ» բառը նշանակում է՝ 1. կրոնական համոզմունք, որը շեղվում է տվյալ եկեղեցու համոզմունքից, 2. կրոն, որը հակասում է տվյալ երկրում ընդունված հիմնական կրոնին, 3. տվյալ աղանդի հետեւորդներ, 4. որեւէ ուսմունքից շեղվող ուղղություն կամ որեւէ ուսմունքի հիմունքներից շեղվելուն ուղղված գործողություն: Միեւնույն աղբյուրի համաձայն՝ «աղանդավոր» բառը նշանակում է՝ 1. որեւէ աղանդի հետեւորդ, հերետիկոս, 2. դոգմատիկ համոզմունքներով եւ խմբի նեղ շահերով առաջնորդվող գործիչ, 3. աղանդ հանդիսացող կամ աղանդավորություն ներկայացնող:

Սահմանադրության 8.1 հոդվածը գործունեության ազատություն է նախատեսում Հայաստանի Հանրապետությունում օրենքին համապատասխան գործող բոլոր կրոնական կազմակերպությունների համար:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու, բացառիկ առաքելությունը հայ ազգի կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում:

Գործի նյութերում առկա ապացույցների եւ մասնավորապես հայցվորների գործունեությունը վերաբերող՝ համացանցից ստացված նյութերի եւ պատասխանողի կողմից դատարան ներկայացված տեսանյութերի հիման վրա, դատարանը նշում է, որ հայցվորների գործունեությունը շեղվում է Հայաստանյայց առաքելական եկեղեցու համոզմունքներից, եւ որ դիմումատու կազմակերպության ծեսերն ու խորհուրդները չեն համապատասխանում եկեղեցու կրոնական եւ ավանդական սկզբունքներին: Պատասխանողի ներկայացուցչի հարցմանը գերագույն պատրիարքի եւ Ամենայն հայոց կաթողիկոսի պատասխանը նույնպես վկայում է դրա մասին: Հետեւաբար դատարանը գտնում է, որ հայցվոր կազմակերպությանն աղանդ անվանելով՝ հոդվածների հեղինակը մտադիր չի եղել վիրավորել կամ զրպարտել այն, այլ, ավելի մեծ հավանականությամբ, արտահայտել է իր կարծիքն ու արժեքների հետ կապված դատողությունը դիմումատու կազմակերպության եւ դրա առաջնորդի վերաբերյալ»:

17. 2012 թվականի օգոստոսի 29-ին դիմումատուներն այդ վճռի դեմ ներկայացրել են վերաքննիչ բողոք, որում նրանք, ի թիվս այլնի, վիճարկում էին, որ Վարչական շրջանների դատարանն անտեսել է իրենց կողմից ներկայացված բոլոր ապացույցները «աղանդ» բառի նվաստացնող եւ վիրավորական բնույթի վերաբերյալ: Վարչական շրջանների դատարանը հստակ, թեեւ անուղղակիորեն, նրանց անվանել է «աղանդ» եւ «աղանդավոր» վիրավորական բառերով եւ ապացույցներ է գտել առ այն, որ նրանք աղանդավորներ էին՝ այդպիսով խախտելով նրանց մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը: Այդ ընթացքում այն հիմնվել է գերագույն պատրիարքի եւ Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից տրամադրված նամակի վրա՝ անտեսելով այն փաստը, որ նամակում պատրիարքի արտահայտած կարծիքները օրենքի տեսանկյունից որեւէ կշիռ չունեն: Այդպես գործելով եւ այդպիսի վճիռ կայացնելով՝ Վարչական շրջանների դատարանը չի կարողացել երաշխավորել նրանց կրոնի ազատության իրավունքը եւ վերոնշյալ սահմանումներն օգտագործելով՝ այն նախապատվություն է տվել Հայաստանյայց առաքելական եկեղեցուն, որը փորձել էր ազդել եւ սահմանափակել Սահմանադրությամբ երաշխավորված նրանց խղճի եւ կրոնի ազատության իրավունքը:

18. 2012 թվականի նոյեմբերի 8-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը մերժել է նրանց վերաքննիչ բողոքը եւ ուժի մեջ է թողել Վարչական շրջանների դատարանի որոշումը: «Աղանդ» բառի օգտագործման վերաբերյալ դիմումատուների բողոքների մասով Վերաքննիչ դատարանը մասնավորապես նշել է.

«... քննելով վերաքննիչ բողոքում «աղանդ» բառի եւ դրա մեկնաբանությունների վերաբերյալ ներկայացված փաստարկները՝ պետք է նշել, որ նույնիսկ իրենց վերաքննիչ բողոքում հայցվորները չեն ժխտել այն փաստը, որ իրենց գործունեությունը շեղվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու համոզմունքներից (սակայն այդ դիտարկումը չպետք է համարել անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված կրոնի ազատության իրավունքի սահմանափակում կամ խտրականության դրսևորում). ... այդպիսի հանգամանքներում հայցվորների պարտականությունն էր ապացուցել իրենց պնդումն առ այն, որ պատասխանողի կողմից ներկայացված տեղեկություններն իրականությանը չեն համապատասխանում»:

19. 2012 թվականի դեկտեմբերի 3-ին դիմումատուները վճռաբեկ բողոք են ներկայացրել Վճռաբեկ դատարան: Վճռաբեկ բողոքի առաջին էջում նրանք նշել են, որ «Վերաքննիչ քաղաքացիական դատարանը» այն դատական որոշումն

ընդունող դատարանն էր, որի դեմ Նրանք բողոքարկում էին, իսկ «2012 թվականի Նոյեմբերի 8»-ը Նշվում էր որպես այդ որոշումն ընդունելու ամսաթիվ: Նաեւ Նշվում էր, որ վճռաբեկ բողոքի օրինակներն ուղարկվել են Վերաքննիչ քաղաքացիական դատարան եւ պատասխանող կողմին: Վճռաբեկ բողոքը պարունակում էր Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման դեմ ամբողջական փաստարկներ: Վճռաբեկ բողոքին կից ներկայացված էր այդ որոշման օրինակը, ինչպես նաեւ փոստային կտրոններ, որոնք ցույց էին տալիս, որ վճռաբեկ բողոքի օրինակն ուղարկվել է Վերաքննիչ քաղաքացիական դատարան եւ պատասխանող կողմին: Վճռաբեկ բողոքի վերջին կետում Նշվում էր, որ դիմումատուները Վճռաբեկ դատարանին խնդրում են բեկանել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 31-ի վճիռը:

20. 2013 թվականի հունվարի 16-ին Վճռաբեկ դատարանն անընդունելի է հայտարարել վճռաբեկ բողոքը՝ հղում կատարելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 222-րդ հոդվածի 1-ին մասին այն հիմքով, որ վճռաբեկ բողոքը ներկայացվել էր Վարչական շրջանների դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 31-ի վճռի դեմ, որը ենթակա չէր բողոքարկման վճռաբեկ վարույթում:

21. 2013 թվականի փետրվարի 15-ին դիմումատուները կրկին ներկայացրել են 2012 թվականի դեկտեմբերի 3-ի իրենց վճռաբեկ բողոքը՝ փոփոխելով վերջին կետն այնպես, որ դրանում հղում կատարվեր 2012 թվականի Նոյեմբերի 8-ի որոշմանը: Նրանք իրենց վճռաբեկ բողոքին կցել են նաեւ վճռաբեկ բողոք ներկայացնելու ժամկետը վերանայելու խնդրանքը: Նրանք պարզաբանել են, որ իրենց առաջին բողոքի վերջին պարբերությունում հղումը 2012 թվականի հուլիսի 31-ի որոշմանը տպագրական սխալ էր: Իրենց պարզաբանումը հիմնավորելու համար դիմումատուները Նշել են, որ իրենց սկզբնական վճռաբեկ բողոքի առաջին էջում եւ դրանում ներկայացված փաստարկներում հղում է կատարվել 2012 թվականի Նոյեմբերի 8-ի որոշմանը:

22. 2013 թվականի մարտի 6-ին Վճռաբեկ դատարանն անընդունելի է հայտարարել փոփոխված վճռաբեկ բողոքը՝ ժամկետանց ներկայացված լինելու պատճառաբանությամբ, եւ մերժել է այդպիսի վճռաբեկ բողոքի ժամկետը վերանայելու վերաբերյալ դիմումատուների միջնորդությունը՝ համարելով այն

անհիմն:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Քաղաքացիական դատավարության օրենսգիրք (1999-2018)

23. Տվյալ ժամանակահատվածում գործող ԶԴՕ-ի 222-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում էր, որ Վճռաբեկ դատարանը վերանայում էր Վերաքննիչ դատարանի կողմից ընդունված դատական որոշումները՝ վճռաբեկ բողոքի հիման վրա եւ օրենսգրքով նախատեսված դեպքերում:

24. 230-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում էր, որ եթե առկա էին վճռաբեկ բողոք ներկայացնելու հիմքեր, ապա դա անելու իրավունք ունեցող անձինք կարող էին այդպիսի վճռաբեկ բողոք ներկայացնել եւ այն սահմանված կարգով ուղարկել Վճռաբեկ դատարան, եւ որ նրանք պետք է դրա օրինակներն ուղարկեին վճիռն ընդունած դատարան եւ կողմերին:

25. 231-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում էր, որ վճռաբեկ բողոքը պետք է պարունակի, ի թիվս այլնի, համապատասխան վճիռն ընդունող դատարանի անվանումը եւ վճիռն ընդունելու օրը:

26. 233-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում էր, որ վճռաբեկ բողոքը պետք է հայտարարվի անընդունելի, եթե, ի թիվս այլնի, այն ներկայացվել է դատարանի այնպիսի որոշման դեմ, որը ենթակա չէր բողոքարկման վճռաբեկ վարույթում:

27. 233-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում էր, որ վճռաբեկ բողոքն անընդունելի հայտարարելու դեպքում Վճռաբեկ դատարանը կարող է ժամկետ սահմանել սխալներն ուղղելու եւ վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

28. Դիմումատուները բողոքում էին, որ Վճռաբեկ դատարանի՝ իրենց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ԶՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ «ԿՅԱՆՔԻ ԽՈՍՔ»
ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՍԻՄՈՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

վճռաբեկ բողոքն անընդունելի հայտարարելու մասին որոշումը խախտել էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ դատարանի մատչելիության իրենց իրավունքը, ինչը, այնքանով, որքանով վերաբերում է գործին, ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ... ունի ... տրիբունալի կողմից ... արդարացի ... լսումների իրավունք...»:

Ա. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

29. Դատարանը նշում է, որ տվյալ բողոքն ակնհայտ անհիմն կամ անընդունելի չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածով սահմանված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ Էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

30. Դիմումատուները պնդել են, որ Վճռաբեկ դատարանը ցուցաբերել է չափազանց ձեւական եւ խիստ մոտեցում՝ իրենց վճռաբեկ բողոքն անընդունելի հայտարարելով: Բազմաթիվ փաստեր եւ նրանց վճռաբեկ բողոքի ամբողջական տեքստը հստակ ցույց էին տալիս, որ այն ներկայացվել է Վերաքննիչ դատարանի որոշման դեմ, եւ որ նրանք պարզապես տեխնիկական սխալ են թույլ տվել՝ իրենց վճռաբեկ բողոքի վերջում նշելով Վարչական շրջանների դատարանը: ԶԴՕ-ի 233-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը հնարավորություն ուներ նրանց թույլ տալու ուղղել այդ սխալը եւ վճռաբեկ բողոքը ներկայացնել կրկին, սակայն որոշել էր դա չանել: Թեեւ կարելի է ասել, որ այդ որոշումը հետապնդել է լեգիտիմ նպատակ, այն անհամաչափորեն եւ անհարկի կերպով սահմանափակել է նրանց՝ դատարանի մատչելիության իրավունքը եւ խաթարել է այդ իրավունքի բուն էությունը:

31. Կառավարությունը վիճարկում էր, որ վճռաբեկ բողոքների վերաբերյալ ԶԴՕ-ում առկա սահմանափակումները սահմանափակող չէին այնքանով, որ խաթարեին դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը, եւ որ դրանք նախատեսված էին արդարադատության պատշաճ իրականացումն ապահովելու համար: Ավելին, Վճռաբեկ դատարանը, տվյալ սահմանափակումը կիրառելով, չի գործել անհամաչափորեն: Դիմումատուների վճռաբեկ բողոքից ակնհայտ էր, որ նրանք միջնորդություն էին ներկայացրել Վճռաբեկ դատարան՝ Վարչական շրջանների դատարանների վճիռը բեկանելու նպատակով: Վճռաբեկ բողոքի առաջին էջում նշված չէր, որ բողոքը ներկայացվում էր Վերաքննիչ դատարանի ընդունած որոշման դեմ. այդ դատարանի անվանման եւ որոշման նշումը կարող էր որպես հստակ հղում հանդես գալ գործով վերջին դատական որոշման համար: Ավելին, վճռաբեկ բողոքի տեքստում դիմումատուները հղում էին կատարում թե՛

Վարչական շրջանների դատարանի վճռին, թե՛ Վերաքննիչ դատարանի որոշմանը: Անտրամաքանական կլիներ ակնկալել, որ Վճռաբեկ դատարանը կարող էր ենթադրել, թե որ դատական որոշումն էին դիմումատուները մտադիր վիճարկել: Տվյալ սխալը չէր կարող տպագրական համարվել, քանի որ այն մեկ տառի սովորական սխալ չէր: Այսպիսով, դիմումատուների վճռաբեկ բողոքն այնպիսին էր, որ այն քննելը կարող էր դուրս լինել Վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակից, իսկ Վճռաբեկ դատարանը չէր կարող դուրս գալ իր իրավասության շրջանակից եւ չէր կարող դիմումատուների համար սահմանել ժամկետ՝ իրենց բողոքի եռայունը փոխելու համար: Եթե Վճռաբեկ դատարանն աներ դա, ապա այն խախտած կլիներ կողմերի հավասարության սկզբունքը:

2. Դատարանի գնահատականը

ա) Ընդհանուր սկզբունքներ

32. Դատարանի մատչելիության իրավունքը սահմանվել է որպես արդար դատաքննության իրավունքի հայեցակետ՝ երաշխավորված Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով, որը նշվել է *Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Golder v. the United Kingdom*] գործում (1975 թվականի փետրվարի 21, §§ 28-36, շարք Ա, թիվ 18): Այդ գործով Դատարանը պարզել է, որ դատարանի մատչելիության իրավունքը 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքների ներքին հայեցակետն է, որով հղում է կատարվում Կոնվենցիայի մեծ մասի հիմքում ընկած օրենքի գերակայությանը եւ կամայական լիազորություններից խուսափելուն: Այսպիսով, 6-րդ հոդվածի 1-ին կետը բոլորի համար ապահովում է քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների հետ կապված դատարան ներկայացված պահանջի իրավունքը (տե՛ս *Գրզեդան ընդդեմ Լեհաստանի* [ՄԴ] [*Grzęda v. Poland*] [GC], թիվ 43572/18, § 342, 2022 թվականի մարտի 15, տե՛ս նաեւ *Չուբաչն ընդդեմ Խորվաթիայի* [ՄԴ] [*Zubac v. Croatia*] [GC], թիվ 40160/12, § 76, 2018 թվականի ապրիլի 5):

33. Դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ եւ կարող է սահմանափակվել: Այդպիսի սահմանափակումները թույլատրվում են անուղղակիորեն, քանի որ դատարան դիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է տարբեր լինել

իրավասու էր վերանայելու Վերաքննիչ դատարանի կողմից ընդունված վճիռները եւ որոշումները (տե՛ս վերոնշյալ 23-րդ պարբերությունը): Գտնելով, որ դիմումատուների վճռաբեկ բողոքը ներկայացվել է Վարչական շրջանների դատարանի, այլ ոչ թե Վերաքննիչ դատարանի վճռի դեմ, Վճռաբեկ դատարանը գանգատը հայտարարել է անընդունելի՝ առանց այն ըստ էության քննելու՝ համաձայն ԶԴՕ-ի 233-րդ հոդվածի (տե՛ս վերոնշյալ 26-րդ պարբերությունը):

36. Դատարանը վերահաստատում է, որ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար ձեռնարկվելիք ֆորմալ քայլերը կարգավորող կանոնների նպատակն է ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը: Դատավարության կողմերը պետք է ակնկալեն, որ կկիրառվեն գործող կանոնները: Այնուամենայնիվ, խնդրո առարկա կանոնները կամ դրանց կիրառությունը չպետք է խոչընդոտեն, որ օրենքին ենթակա անձինք օգտվեն իրավական պաշտպանության հասանելի միջոցներից (տե՛ս «*Սոտիրիս եւ Նիկոս Կուտրաս*» ԲԸ-ն (ATTEE) *ընդդեմ Յոլնաստանի [Sotiris and Nikos Koutras ATTEE v. Greece]*, թիվ 39442/98, § 20, ՄԻԵԴ 2000-XII եւ *Բելեշը եւ այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության [Běleš and Others v. the Czech Republic]*, թիվ 47273/99, § 49, ՄԻԵԴ 2002-IX): Տվյալ համատեքստում Դատարանը մատնանշել է «ավելորդ ձեւականության» վտանգների մասին, որը կարող է հակառակ ազդեցություն ունենալ դատարան դիմելու իրավունքի պրակտիկ եւ արդյունավետ իրականացման պահանջի վրա՝ համաձայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի: Դա սովորաբար տեղի է ունենում այնպիսի դեպքերում, երբ դատավարական կանոնն առանձնապես խիստ կառուցվածք ունի, ինչը խոչընդոտում է, որ դիմումատուի գործողությունը քննվի ըստ էության՝ դրան ուղեկցող ռիսկով առ այն, որ դատարանների կողմից արդյունավետ պաշտպանության նրա իրավունքը կարող է խախտվել (տե՛ս վերելում հիշատակված՝ *Չուբաչի [Zubac]* գործը, § 97, լրացուցիչ հղումներով):

37. Դատարանը նշում է, որ դիմումատուները չեն վիճարկել Վարչական շրջանների դատարանի վճիռն անմիջապես Վճռաբեկ դատարանում, այլ նախ բողոքարկել են Վերաքննիչ դատարան եւ միայն դրանից հետո են վճռաբեկ բողոք ներկայացրել Վճռաբեկ դատարան, ինչպես պահանջվում էր ներպետական օրենսդրությամբ: Թեեւ Վճռաբեկ դատարանը չի հիմնավորել իր այն եզրակացությունը, որ դիմումատուների բողոքն ուղղված էր Վարչական շրջանների դատարանի վճռի դեմ, թվում է, թե այդ եզրակացությունը հիմնականում հիմնված էր բողոքի եզրափակիչ մասի այն ձեւակերպման վրա,

որտեղ դիմումատուները Վճռաբեկ դատարանին խնդրել են բեկանել «Վարչական շրջանների դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 31-ի վճիռը»: Այնուամենայնիվ, դիմումատուների կողմից ներկայացված բողոքի ամբողջ տեքստից ակնհայտ էր, որ այն, փաստորեն, ներկայացվել էր Վերաքննիչ դատարանի որոշման դեմ: Մասնավորապես առաջին էջում դիմումատուները նշել էին Վերաքննիչ դատարանը՝ որպես ԶԴՕ-ի 231-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով համապատասխան որոշումն ընդունող եւ այդ որոշման օրը սահմանող դատարանի անվանում (տե՛ս վերոնշյալ 25-րդ պարբերությունը): Նրանք Վերաքննիչ դատարանի որոշման օրինակը կցել էին վճռաբեկ բողոքին, ինչպես նաեւ կցել էին ապացույցն առ այն, որ վճռաբեկ բողոքի օրինակն ուղարկվել էր Վերաքննիչ դատարան՝ ԶԴՕ-ի 230-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով (տե՛ս վերոնշյալ 24-րդ պարբերությունը): Թե՛եւ դիմումատուների բողոքում առկա որոշ փաստարկներ իսկապես վերաբերում էին Վարչական շրջանների դատարանի վճռին, դա զարմանալի չէ՝ հաշվի առնելով, որ Վերաքննիչ դատարանի՝ դիմումատուների կողմից վիճարկվող որոշումը հաստատել է այդ վճիռը (տե՛ս վերոնշյալ 18-րդ պարբերությունը), եւ որ այն չպետք է մեկնաբանվեր որպես միանշանակ նշում առ այն, որ բողոքը ներկայացվել էր այդ վճռի դեմ: Այսպիսով, Վճռաբեկ դատարանի համար պետք է պարզ լիներ, որ դիմումատուների վճռաբեկ բողոքի եզրափակիչ մասի ձեւակերպումը որոշ տպագրական սխալի կամ որեւէ այդպիսի վրիպակի հետեւանք էր: Այնուամենայնիվ, չնայած ԶԴՕ-ի 233-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ դիմումատուների կողմից իրենց սխալն ուղղելու հնարավորությանը (տե՛ս վերոնշյալ 27-րդ պարբերությունը)՝ Վճռաբեկ դատարանը որոշեց դա չանել՝ առանց իր որոշումը որեւէ կերպ հիմնավորելու, եւ վճռաբեկ բողոքը հայտարարել անընդունելի՝ առանց դիմումատուներին իրավիճակը շտկելու լրացուցիչ հնարավորություն տալու: Դատավարական կանոնների այդպիսի խիստ կիրառության արդյունքում դիմումատուների վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի կողմից ըստ էության չի քննվել:

38. Դատարանն ընդունում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից կիրառվող սահմանափակումը իրավաչափ նպատակ էր հետապնդում, այն է՝ ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը: Այնուամենայնիվ, այդ անելով՝ Վճռաբեկ դատարանը, կարելի է ասել, «ավելորդ ձեւականություն» է դրսեւորել՝ առանձնակի խստությամբ կիրառելով ԶԴՕ-ի 222-րդ հոդվածի 1-ին մասի եւ 233-րդ

հողվածի 1-ին մասի պահանջները եւ այդպիսով անհամաչափորեն եւ անհիմն կերպով սահմանափակելով դիմումատուների՝ դատարանի մատչելիության իրավունքը:

39. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

40. Դիմումատուները բողոքել են, որ Վարչական շրջանների դատարանը խախտել է կրոնական հարցերում պետության չեզոքության եւ անկողմնակալության պարտականությունը՝ պայմանավորված որոշ եզրակացություններով, որոնց այն հանգել է շաբաթաթերթերում «աղանդ» եւ «աղանդավորական» բառերի օգտագործումը գնահատելիս՝ այդպիսով խախտելով Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված երաշխիքները, որոնք ունեն հետեւյալ բովանդակությունը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը եւ դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ եւ հրապարակավ կամ մասնավոր կարգով քարոզչության, արարողությունների, պաշտամունքի եւ ծեսերի միջոցով արտահայտելու ազատությունը:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների»:

ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կողմերի փաստարկները

ա) Կառավարությունը

41. Կառավարությունը սկզբում մի քանի նախնական առարկություններ է ներկայացրել առ այն, որ դիմումատուները չէին սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները՝ պայմանավորված

համապատասխան դատավարական կանոնների համաձայն վճռաբեկ բողոք ներկայացնելու անհնարինության հետ, ինչպես նաեւ առ այն, որ երկրորդ դիմումատուն չուներ զոհի կարգավիճակ, քանի որ «աղանդ» բառը չէր օգտագործվել նրա նկատմամբ, այլ միայն օգտագործվել էր ընդհանուր առմամբ կազմակերպության նկատմամբ:

42. Կառավարությունը նաեւ պնդել է, որ կողմերի միջեւ վեճը չուներ այնպիսի բնույթ կամ կարեւորություն, որ խնդիրներ առաջացներ՝ կապված կրոնական համոզմունքների իրավաչափության գնահատման հարցերի հետ: Հետեւաբար պետությունը չի միջամտել դիմումատուների՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված իրավունքներին: Ներպետական դատարանները չեն անդրադարձել դիմումատուների կրոնական համոզմունքներին, այլ միայն որոշում են կայացրել դիմումատուների կողմից ներկայացված հայցի հիման վրա դիմումատու կազմակերպության նկատմամբ «աղանդ» բառի ենթադրյալ նվաստացնող բնույթի վերաբերյալ՝ միաժամանակ ապահովելով արդարացի հավասարակշռություն դիմումատուների՝ 9-րդ հոդվածով սահմանված կենսական, բայց հակասական իրավունքների եւ պատասխանող կազմակերպության խոսքի ազատության իրավունքի միջեւ: Նրանք նշել են, որ եղել են մի շարք դեպքեր, երբ Դատարանը 10-րդ հոդվածի խախտում է հայտնաբերել, որտեղ դիմումատուների նկատմամբ պատժամիջոցներ են կիրառվել կրոնի հետ կապված սադրիչ արատահայտություններ անելու, այդ թվում՝ «աղանդ» բառն օգտագործելու համար: Նմանապես, սույն գործով ներպետական դատարանները ճիշտ են գնահատել փաստերը եւ եզրակացրել են, որ վիճարկվող հրապարակումները չեն պարունակել նվաստացնող կամ վիրավորական նյութեր եւ պաշտպանված են եղել պատասխանողի խոսքի ազատության իրավունքով:

43. Կառավարությունը նշել է, որ տարբեր կրոնական խմբեր պարտավոր են հանդուրժողականություն ցուցաբերել միմյանց նկատմամբ, այդ թվում՝ հրապարակային քննադատական հայտարարությունների նկատմամբ, եթե դրանք չեն համարվում դիտավորյալ եւ անհիմն վիրավորանքներ կամ ատելության խոսք: Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ նրանք, ովքեր ընտրել են իրենց կրոնական հայացքներն արտահայտելու ազատությունը, չեն կարող ողջամտորեն ակնկալել, որ զերծ կմնան բոլոր տեսակի քննադատություններից: Վարչական շրջանների դատարանը ցուցաբերում էր միեւնույն մոտեցումը՝

համարելով, որ յուրաքանչյուր անձ կամ խումբ պարտավոր է հանդուրժել որոշակի քննադատություն այն պահից, երբ տվյալ հարցը մուտք է գործում հանրային քննարկումների ոլորտ: Այն չի արդարացրել դիմումատուների նկատմամբ «աղանդ» բառի օգտագործումը, սակայն գտնում էր, որ օգտագործված բառերն ու արտահայտությունները չպետք է համարվեն վիրավորական եւ զրպարտող: Վարչական շրջանների դատարանը նաեւ չի եզրակացրել, որ պատասխանողը ճիշտ է օգտագործել «աղանդ» բառը: Այն պարզապես պարզել է, որ պատասխանող կազմակերպությունը դատողություն է արել՝ կապված արժեքների հետ, եւ օգտագործել է այնպիսի արտահայտություններ, որոնք կարող էին ցնցել հասարակությանը: Վարչական շրջանների դատարանը մանրակրկիտ վերլուծել է վիճարկվող «աղանդ» բառը՝ որոշելու համար, թե արդյոք այն նվաստացնող բնույթ էր կրում՝ խորհրդակցելով հուսալի աղբյուրների հետ, եւ եզրակացրել է, որ դիմումատու կազմակերպությանն «աղանդ» անվանելով՝ հողվածների հեղինակը կազմակերպությանը վիրավորելու կամ նվաստացնելու մտադրություն չի ունեցել, այլ, ավելի մեծ հավանականությամբ, մտադիր է եղել կարծիք հայտնել եւ արժեքների հետ կապված դատողություն անել կազմակերպության կամ դրա առաջնորդի մասին: Ներպետական դատարաններն առավելապես իրավասու էին այդպիսի գնահատական տալու համար՝ հաշվի առնելով գործի հանգամանքները ներպետական իրավական համակարգի տեսանկյունից: Դատարանը չպետք է գործի որպես չորրորդ ատյանի մարմին եւ պետք է գերծ մնա այդպիսի մանրամասների հետ կապված որոշում ընդունելուց:

բ) Դիմումատուները

44. Դիմումատուները սկզբում վիճարկել էին, որ սպառել են իրավական պաշտպանության ներպետական միջոցները՝ ներկայացնելով վճռաբեկ բողոք, որում ներկայացրել էին Կոնվենցիային համապատասխան իրենց բողոքները, սակայն այն չի քննվել Վճռաբեկ դատարանի կողմից՝ խախտելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրենց իրավունքները:

45. Դիմումատուները, ելնելով իրենց բողոքի էությունից, նաեւ պնդել են, որ այն, թե ինչպես է Վարչական շրջանների դատարանը գնահատել թերթերի կողմից «աղանդ» բառի թշնամական օգտագործումը, այդ թվում՝ այն գնահատականը, որ դիմումատու կազմակերպությունը շեղվել է Հայաստանյայց առաքելական

Եկեղեցու համոզմունքներից, մտահոգություններ և առաջացնում իշխանությունների կողմից հանդուրժողականության բացակայության եւ խտրականության վերաբերյալ: Իր որոշման մեջ Վարչական շրջանների դատարանը, փաստորեն, օրինականացրել է «աղանդ» բառի նսեմացնող եւ համատարած օգտագործումը հայ հասարակությունում ցանկացած ոչ հիմնական կրոնի, այդ թվում՝ դիմումատու կազմակերպության կողմից քարոզվող կրոնի նկատմամբ: Վարչական շրջանների դատարանը հստակ նշել էր, եւ Վերաքննիչ դատարանը հաստատել էր, որ թերթերի կողմից դիմումատու կազմակերպությանն «աղանդ» անվանելն արդարացված էր, քանի որ դիմումատու կազմակերպությունը շեղվել էր Հայաստանյայց առաքելական եկեղեցու համոզմունքների գերիշխող համակարգից: Այդ եզրահանգման հետ կապված ապացույցների առումով Վարչական շրջանների դատարանը հիմնվել էր Հայաստանում պետական կամ նույնիսկ ազգային կրոն համարվող Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատրիարքի նամակի վրա, որում վերջինս դիմումատու կազմակերպության՝ «աղանդավորական» համարվող գաղափարների եւ համոզմունքների վերաբերյալ տվել էր իր սեփական գնահատականը: Դատարանի գնահատականն ընդհանուր առմամբ անհամատեղելի էր 9-րդ հոդվածի երաշխիքների հետ եւ խախտում էր բազմակարծության սկզբունքը՝ ուղղված ինդոկտրինացիային՝ հօգուտ գերիշխող հիմնական կրոնի: Այսպիսով, հայտնելով այն կարծիքը, որ դիմումատու կազմակերպության հավատքը շեղվում էր հիմնական կրոնի համոզմունքներից, եւ որ նրա կրոնական ծեսերն ու խորհուրդները չէին համապատասխանում այդ հիմնական կրոնի կրոնական եւ ավանդական սկզբունքներին, եւ այդ հիմքով եզրակացնելով, որ «աղանդ» բառի օգտագործումն արդարացված էր, Վարչական շրջանների դատարանը, որպես պետական մարմին, խախտել է կրոնական հարցերում չեզոքություն եւ անկողմնակալություն պահպանելու պետության պարտականությունը: Այդպիսով, ներպետական դատարանը, փաստորեն, գնահատել է դիմումատուների կողմից քարոզվող եւ դավանվող կրոնական համոզմունքների համակարգի իրավաչափությունը:

46. Դիմումատուները վիճարկում էին, որ Վարչական շրջանների դատարանը պետք է ձեռնպահ մնար այն հարցերի կարգավորումից, որոնք վերաբերում էին այն բանին, թե արդյոք «Կյանքի խոսքը» համապատասխանում էր գերիշխող եկեղեցու հավատքի համակարգին, թե շեղվում էր դրանից:

Ցանկացած եզրահանգում առ այն, որ «աղանդ» բառի օգտագործումը «Կյանքի խոսք» կրոնական համայնքի նկատմամբ արդարացված էր, համայնքի համոզմունքների համակարգի գնահատման վրա հիմնված լինելու դեպքում կխախտեր 9-րդ հոդվածը: «Աղանդ» բառի օգտագործման վիրավորական լինելու գնահատումը կարող էր կատարվել առանց որոշելու, թե արդյոք խմբի համոզմունքները շեղվում էին հիմնական, ավանդական համոզմունքների համակարգից՝ վերլուծելով հանրության կողմից «աղանդ» բառի ընկալումն ու ըմբռնումը, ինչպես նաեւ այն, թե արդյոք այն բացասական ենթատեքստ ուներ, թե՛ ոչ: Կառավարության փաստարկները, որոնցով փորձ էր արվում արդարացնել Վարչական շրջանների դատարանի եզրակացությունները պատասխանողի խոսքի ազատությունը պաշտպանելու անհրաժեշտությամբ, դուրս էին Դատարանի կողմից կողմերին առաջադրվող հարցի շրջանակից:

47. Դիմումատուները, ի վերջո, պնդել են, որ Վարչական շրջանների դատարանի չեզոքության եւ անկողմնակալության բացակայությունը պետք էր դիտարկել պետության կողմից ընդհանուր առմամբ կրոնական փոքրամասնությունների եւ մասնավորապես՝ դիմումատուների նկատմամբ խտրական քաղաքականության ավելի լայն համատեքստում: Ի վերջո, Վարչական շրջանների դատարանը չի պահպանել չեզոքությունն ու անկողմնակալությունը համապատասխան լրատվամիջոցների հրապարակումներում «աղանդ» բառի օգտագործումը գնահատելիս, ինչի արդյունքում խախտել է դիմումատուների՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները:

2. Դատարանի գնահատականը

48. Դատարանն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ Կառավարության նախնական առարկություններին, քանի որ դիմումատուների՝ 9-րդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքն ամեն դեպքում անընդունելի է հետեւյալ պատճառներով:

49. Սույն գործով դիմումատուներ են կրոնական կազմակերպությունը եւ դրա հովիվը, որոնք իրավական պաշտպանության պահանջ են ներկայացրել ներպետական դատարաններ, որը չի բավարարվել թերթում տպագրված այն

հողվածների կապակցությամբ, որոնք, ըստ դիմումատուների, պարունակում էին զրպարտող եւ վիրավորական հայտարարություններ, քանի որ, ի թիվս այլնի, նրանք դիմումատու կազմակերպությանն անվանել են «աղանդ», իսկ դրա հետեւորդներին՝ «աղանդավորներ»: Ներպետական դատարանները, համադրելով մրցակցող շահերը, եզրակացրել են, որ թերթում տպագրված հողվածները պաշտպանված են հեղինակի խոսքի ազատության իրավունքով եւ մերժել են դիմումատուների պահանջները:

50. Դատարանը վերահաստատում է, որ թեեւ Կոնվենցիայի շատ դրույթների հիմնական նպատակը անհատին պետական մարմինների կամայական միջամտությունից պաշտպանելն է, կարող են լինել նաեւ համապատասխան իրավունքների արդյունավետ իրացմանը ներհատուկ դրական պարտավորություններ: Այդպիսի պարտավորությունները կարող են պահանջել նաեւ միջոցների ձեռնարկում՝ ապահովելու համար կրոնի ազատությունը նույնիսկ անհատների միջեւ հարաբերություններում (տե՛ս Ռաբչեւսկան ընդդեմ Լեհաստանի [Rabczewska v. Poland], թիվ 8257/13, § 49, 2022 թվականի սեպտեմբերի 15): Երբ Կոնվենցիայով նախատեսված երկու իրավունքներ միմյանց հակասում են, ինչպես սույն գործով նշված, Կոնվենցիայի 9-րդ եւ 10-րդ հողվածներով երաշխավորված իրավունքների դեպքում, իշխանությունների պարտականությունն է արդարացի հավասարակշռություն հաստատել այդ երկու արժեքների միջեւ (տե՛ս Կարահմեդն ընդդեմ Բուլղարիայի [Karaahmed v. Bulgaria], թիվ 30587/13, §§ 91-95, 2015 թվականի փետրվարի 24 եւ Թագիեւը եւ Հուսեյնովն ընդդեմ Ադրբեջանի [Tagiyev and Huseynov v. Azerbaijan], թիվ 13274/08, § 44, 2019 թվականի դեկտեմբերի 5):

51. Դատարանը, այնուամենայնիվ, նշում է, որ դիմումատուների՝ 9-րդ հողվածի համաձայն ներկայացված բողոքը՝ կապված ներպետական դատարանների կողմից լրատվամիջոցների՝ ենթադրաբար զրպարտող եւ վիրավորական հրապարակումներից արդյունավետ դատական պաշտպանություն ապահովելու իրենց դրական պարտավորության ենթադրյալ չկատարման հետ, անընդունելի է հայտարարվել այն պահին, երբ սույն դիմումի մասին ծանուցումը ներկայացվել է պատասխանող Կառավարությանը: Այսպիսով, սույն վճիռը վերաբերում է միայն դիմումատուների՝ 9-րդ հողվածի համաձայն ներկայացված բողոքի մնացած մասին, այն է՝ նրանց այն պնդմանը, որ մրցակցող իրավունքների միջեւ հավասարակշռություն պահպանելիս Վարչական շրջանների դատարանը

կատարել է որոշ գործողություններ, որոնք խախտել են 9-րդ հոդվածով սահմանված երաշխիքները: Դիմումատուները մասնավորապես հղում են կատարել Վարչական շրջանների դատարանի այն եզրակացությանը, որ իրենց կրոնական գործունեությունը շեղվել է Հայաստանում գերիշխող Հայաստանյայց առաքելական եկեղեցու համոզմունքներից, եւ հետեւաբար դիմումատու կազմակերպությանն «աղանդ» անվանելն ընդունելի էր: Դիմումատուները վիճարկում էին, որ այդպիսի գործողություններով Վարչական շրջանների դատարանը, ըստ էության, գնահատել է իրենց հավատքի իրավաչափությունը եւ դրանով իսկ խախտել է կրոնական հարցերում չեզոքություն եւ անկողմնակալություն պահպանելու պետության պարտականությունը:

52. Դատարանը վերահաստատում է, որ, ինչպես երաշխավորված է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով, մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը վերաբերում է միայն այն տեսակետներին, որոնք ունեն որոշակի անվիճարկելիություն, լրջություն, ամբողջականություն եւ կարեւորություն: Այնուամենայնիվ, նշված պայմանը բավարարելու դեպքում պետության չեզոքության եւ անկողմնակալության պայմանը համատեղելի չէ կրոնական համոզմունքների իրավաչափությունը կամ այդ համոզմունքներն արտահայտելու եղանակները գնահատելու հետ կապված պետության որեւէ լիազորության հետ (տե՛ս Էվեյդան եւ այլք ընդդեմ Սիացյալ Թագավորության [Eweida and Others v. the United Kingdom], թիվ 48420/10 եւ 3 այլ գործեր, § 81, ՄԻԵԴ 2013 (քաղվածքներ))՝ լրացուցիչ հղումներով):

53. Սույն գործով Դատարանը որեւէ հիմք չունի կասկածելու, որ դիմումատուների համոզմունքներն ունեին անհրաժեշտ անվիճարկելիության, լրջության, ամբողջականության եւ կարեւորության աստիճան (տե՛ս նաեւ «Կյանքի խոսք» եկեղեցիների միությունը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի [Savez crkava “Riječ života” and Others v. Croatia], թիվ 7798/08, 2010 թվականի դեկտեմբերի 9): Այնուամենայնիվ, ներպետական դատարանների, մասնավորապես՝ Վարչական շրջանների դատարանի վարքագծի մեջ այն չի տեսնում որեւէ բան, որը կարող է հանգեցնել նրանց կողմից 9-րդ հոդվածով սահմանված իրենց բացասական պարտավորությունների խախտմանը, մասնավորապես՝ կրոնական համոզմունքների հետ կապված պետության չեզոքության եւ անկողմնակալության պարտականությանը: Դատարանը նշում է, որ ներպետական դատարանները պարզապես հավասարակշռել են մրցակցող

շահերը, ինչպես պահանջվում է այդպիսի դեպքերում, եւ եզրակացրել են, որ թերթերի հոդվածներում «աղանդ» բառի օգտագործումն արժեքային դատողություն էր: Դատարանը չի քննի, թե արդյոք այդպիսի գործողությամբ ներպետական դատարաններն արդարացի հավասարակշռություն են հաստատել 9-րդ եւ 10-րդ հոդվածներով սահմանված մրցակցող իրավունքների միջեւ՝ պատշաճ կերպով հաշվի առնելով իր նախադեպային իրավունքում սահմանված սկզբունքները (տե՛ս, օրինակ, վերելում հիշատակված՝ Ռաբչեսկայի [Rabczewska] գործը, § 51), քանի որ, ինչպես արդեն նշվել է վերելում, այդ հարցը դուրս է սույն վճռի շրջանակներից: Դիմումատուների՝ 9-րդ հոդվածի համաձայն ներկայացված կոնկրետ մեղադրանքի մասով չի կարելի ասել, որ ներպետական դատարանները միջամտել են դիմումատուների՝ 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքներին: Հատկանշական է, որ ներպետական դատարանները դիմումատու կազմակերպության նկատմամբ չեն օգտագործել «աղանդ» բառը կամ չեն բնութագրել այն որպես այդպիսին: Բացի այդ, նրանց կողմից իրականացվող քննության շրջանակը երբեւէ չի ներառել որեւէ հարց դիմումատուների հավատքի իրավաչափության վերաբերյալ: Այս առումով Դատարանը չի կարող համաձայնել դիմումատուների ներկայացրած այն փաստարկի հետ, որ ներպետական դատարանների կողմից արված այն նշումը, համաձայն որի նրանց կրոնական համոզմունքները տարբերվում էին Հայաստանյայց առաքելական եկեղեցու համոզմունքներից, համարվում էր դիմումատուների հավատքի իրավաչափության գնահատում: Դիմումատուներն ընդհանուր առմամբ վիճարկում էին, որ 9-րդ հոդվածի համաձայն՝ պետության չեզոքության եւ անկողմնակալության պարտականության ենթադրյալ խախտման վերաբերյալ բողոքի մասով որեւէ խնդիր առկա չէ:

54. Դրանից բխում է, որ գանգատի սույն մասն ակնհայտ անհիմն է եւ պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի եւ 4-րդ կետի համաձայն:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

55. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ԶՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ «ԿՅԱՆՔԻ ԽՈՍՔ»
ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՍԻՄՈՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

ապա Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

56. Դիմումատուները ոչ նյութական վնասի դիմաց պահանջել են 5 000 եվրո:

57. Կառավարությունը պնդել է, որ ենթադրյալ խախտման եւ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների հետ կապված դիմումատուների կրած ենթադրյալ վնասի միջեւ որեւէ պատճառահետեւանքային կապ առկա չէ:

58. Դատարանը նշում է, որ իր կողմից խախտման արձանագրումը հիմք է վերջնական որոշման կամ վճռի վերանայման համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, որը բավարարվելու դեպքում կարող է լինել համապատասխան միջոց՝ հայտնաբերված խախտումը վերացնելու համար:

59. Այսպիսով, Դատարանը գտնում է, որ դիմումատուները կրել են ոչ նյութական վնաս, որը բավարար չափով չի փոխհատուցվում խախտումն արձանագրելու միջոցով: Դատարանը հետեւաբար նպատակահարմար է գտնում դիմումատուներին շնորհել 3 600 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

60. Դիմումատուները պահանջել են 1 962 եվրո՝ դատական ծախսերի եւ ծախքերի դիմաց: Նրանք նաեւ պահանջել են 2 494 եվրո իրենց փաստաբանի վարձատրության համար, 726 եվրո՝ փորձագետի եզրակացության համար, որը նրանք պատվիրել էին ներպետական դատարաններ ներկայացնելու համար (տե՛ս վերոնշյալ 15-րդ պարբերությունը), եւ 367 եվրո՝ քաղաքացիական դատավարության ընթացքում անհրաժեշտ ծախսերն ու ծախքերը պատասխանողին փոխհատուցելու համար:

61. Կառավարությունը պնդում էր, որ դատական ծախսերի վերաբերյալ դիմումատուների պահանջները չափազանցված էին եւ բավականաչափ մանրամասն ներկայացված չէին: Փորձագիտական եզրակացության արժեքի մասով դիմումատուները չեն կարողացել ապացուցել, որ այդ ծախսն անհրաժեշտ էր: Ներպետական վարույթներում նրանց դեմ հարուցված քաղաքացիական հայցի մասով դիմումատուների կողմից ենթադրվող խախտումը մասնավորապես վերաբերում էր «աղանդ» բառի օգտագործմանը, այլ ոչ թե ընդհանուր առմամբ ներպետական վարույթին, միևնույն քաղաքացիական որոշումը, համաձայն որի դիմումատուները պետք է փոխհատուցում վճարեին, արդյունք էր ներպետական վարույթներում դիմումատուների պահանջների ամբողջական մերժման, որը պայմանավորված էր ոչ միայն «աղանդ» բառի օգտագործմամբ:

62. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի փոխհատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվում է, որ դրանք փաստացի կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործի շրջանակներում հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ վերոնշյալ չափանիշները՝ Դատարանը ողջամիտ է համարում տրամադրել 1 000 եվրո բոլոր պահանջների մասով կրած ծախսերի համար:

ՍՈՒՅՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. Հայտարարում է, որ դատարանի մատչելիությունը մերժելու վերաբերյալ բողոքն ընդունելի է, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի:

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի

խախտում.

3. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուներին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) ոչ სიუღական վնասի դիմաց՝ 3 600 եվրո (երեք հազար վեց հարյուր եվրո)՝ գումարած ոչ სიუღական վնասի դիմաց գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 1 000 եվրո (հազար եվրո)՝ գումարած դիմումատուներից գանձման ենթակա ցանկացած հարկ,

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

4. Մերժում է դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ԶՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ «ԿՅԱՆՔԻ ԽՈՍՔ» ԵԿԵՂԵՑԻՆ
ԵՎ ՍԻՄՈՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2026 թվականի
ապրիլի 2-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ
կետերի:

Կատերինա Շիմաչկովա՝

Քարտուղար

Վիկտոր Սոլովեյչիկ՝

Նախագահ